ԿՈՄԻՏԱՍ

(ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Կոմիտաս.

Սկիզբ ու վերջ չունեցող անուն: Այո՛: անսկիզբ եւ անվախճան, որովհետեւ նրա հունդը բողբոջեց իր ժողովրդի դարաւոր անցեալից, նրա պատմական ճակատագրից: Իր սրտի մէջ արիւնը դարձաւ ժողովրդի սրտի հետ միաձոյլ··· Ապրեց, երգեց, խնդաց, վշտացաւ՝ միշտ ներդաշնակ իր ատաղձի հետ, հոգին ու հանճարը նուիրեց նրան, ում կեանքի յարատեւութեան ու ոգու անմահութեան համար էր աշխարհ եկել··· փչրուեց ոգեձոյլ այդ մարդը, իր լուսեղէն հիւլէները խամրեցին, մերթ ընդ մերթ առկայծելով համասփիւռ խաւարի մէջ, հանդաւ··· Ու վերստին ձուլուեց իր ժողովրդի հետ, ոգիացած, սրբացած մնաւ ամէն մի հայի մէջ; երգ դարձաւ ամէն հայի շուրթին···

Մարդ էր, դարձաւ առասպել, որովհետեւ առասպելի չափ մարդ էր նա:

Ներբող չէ, ոչ· այս ամէնի ճշմարտացիութիւնն է, որ նրան դարձրել է մեծ, դարձրել է սրբութիւն, մի ողջ ժողովրդի համազգային պաշտամունք:

Կոմիտասն հասաւ համամարդկային բարձրութեան իր հետ բարձրացնելով մի ամբողջ ժողովրդի երաժշտական արուեստի մէջ մարմնացած ոգին, որովհետեւ ընդհանրացնելով հանդերձ իր նախորդների ձեռք բերած նուաճումները, նա սկսեց գիտական երաժշտական ազգագրութեան ստեղծումից, խոշոր գիտնականի հետազօտական վերլուծական աշխատանքով փաստեց այդ երաժշտութեան ինքնութիւնն ու առանձնայատկութիւնները եւ այնուհետեւ, իր ստեղծագործական փայլուն ձիրքով, հիմքը դրեց նաեւ ազգային ստեղծագործական նոր դպրոցի:

Կոմիտասը մեծ գիտնականի խոր երաժշտագիտական վերլուծութիւններով ցոյց տուեց, որ հայը ոչ միայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն, այլեւ վեր հանեց այդ ինքնուրոյնութիւնն ապացուցող բոլոր ինքնատիպ յատկանիշները:

Տենդագին հաւաստելով մեր ազգային երաժշտութեան ինքնութիւնը, Կոմիտասը գիտական – պատմաբանի դրոյթներով սահմանում է նաեւ հոգեւոր փոխազդեցութեան անժխտելի իրողութիւնը: «··· Բայց աշխարհի վրայ ո՞ր երաժշտութիւնն անխառն ու անապակ է· մեր գիտցածով՝ միայն անասուններինը, որոնք նոյն ձայնն ու եղեւէջը կ'երգեն, զի փոխառութեան շնորք չունեն:

Ազգերու փոխադարձ ազդեցութիւնն անուրանալի եւ անհերքելի փաստ է, որովհետեւ անազդեցիկ մնացած ազգ չկայ, իւրաքանչիւր ազգ, ինչ որ չունի, ունեցողէն, պէտք զգացած ժամանակ, փոխ կ'առնէ ու կ'ազգայնացնէ:

Ազգի մը լեզուն ու գրականութիւնը կարող են ձեւափոխուել ու զարգանալ, օրինակ առնելով ուրիշ ազգերէն, բայց երբ ան ինքնայատուկ լեզու եւ գրականութիւն ունի, ունի եւ ինքնուրոյն երաժշտութիւն: Ամբողջ արեւմտեան ազգերը զարգացան, սնունդ առնելով հին յունական քաղաքակրթութեան բեկորներէն՝ լատինականի միջոցով, բայց եւ

այնպէս, իւրաքանչիւր արեւմտեան ազգ ունի ուրոյն երաժշտութիւն, որ ո՛չ յոյն է եւ ո՛չ լատին:

Իւրաքանչիւր ազգի երաժշտութիւն իր ազգերի հնչական ելեւէջներէն կը ծնի ու կը ծաւալի: Հայ լեզուն ունի իր յատուկ հնչաւորութիւնը, ուրեմն եւ համապատասխանող երաժշտութիւն»:

Իսկ ո՞րտեղ էին այդ յատկանիշները, միայն իր շուրջը հնչող այլազան ազգային երգերի՞ մէջ: Ո՛չ: Դրա համար Կոմիտասը դնաց մեր երաժշտութեան սկզբնաւորման խորքերը՝ մինչեւ հեթանոսութիւն: Այդ ճանապարհն էլ ինքը դտաւ· դտաւ մագաղաթներում, պատմիչների մօտ, դպրեվանքերում, բանահիւսութիւնից մինչեւ ճարտարապետութիւն, հողից մինչեւ ոգի ընկած տարածութեան մէջ: Պէտք եղաւ վերծանել խաղերը· իր ամբողջ կեանքը դրեց եւ այստեղ··· հասնում էր արդէն բանալուն, որով բաց էր անելու կողպուած դանձարանները···: Պէտք եղաւ քակել օտարամուտ աղաւաղումներով անճաշակ պաճուճանքների հանդոյցները, որով զգեստաւորուել էր դարերի ընթացքում մեր հոգեւոր երաժշտութիւնը, տեսնելու համար անապակ ակունքը:

Վերլուծեց դուսանական երգարուեստը, քաղաքային ազգային հայրենասիրական երգերը· իւրաքանչիւրին իր տեղը յատկացրեց:

Այս ամէնից զատեց բուն, ամենահարուստ ու ամէնից անաղարտ ակնաղբիւրը՝ գեղջական երաժշտութիւնը՝ գեղջուկ կեանքի, նրա ներքնաշխարհի ճշմարիտ ու անմիջական արտայայտութիւնը:

Բայց կարո՞ղ էր արդեօք գեղջկական երգը ճիշտ այն ձեւով ինչպէս յօրինում ու երգում է գեղջուկն ինքը, այն զտուած ու մաքրուած նիւթը լինել, որի վրայ կարող էր վեր բարձրանալ մի ամբողջ ժողովրդի երաժշտական արուեստը:

Գեղջկական երգը, յիրաւի, այն հայելին էր, որի մէջ ամէնից աւելի յստակ էին արտացոլուած հայ ու ճշմարտացի էին արտացոլուած հայ ժողովրդի կեանքն ու ներքնաշխարհի հազարերանգ դրսեւորումները, այդ երգը ամէնից աւելի աւանդապահն էր հայ ժողովրդի հոգեկան ու բարոյական յատկանիշների գեղարուեստական արտայայտութեան: Բայց այդ ակունքը բացարձակ անաղարտ ու անապակ չէր:

Կոմիտասը մեծ գիտնականի խելքով ու համբերատարութեամբ ուսումնասիրեց այդ երգերը, գրի առաւ ու հաւաքեց դբրանք: Բայց ի՞նչպէս գրի առաւ դրանք: Ոչ այնպէս՝ ինչպէս նրանք կային, այլ զտեց ու մաքրեց դրանք բոլոր աղաւաղումներից, օտարամուտ տարրերից կատարողական խեղաթիւրումներից եւ հինգ հազարի չափ այն երգերը, որ հաւաքեց Կոմիտասն իր ողջ կեանքի ընթացքում, եղան մեր գիտական երաժշտական ազգագրութեան անկրկնելի նմոյշները, այդ ազգագրութեան հիմնաքարը: Այդ փոքրիկ, միաձայն մեղեդիները՝ ժողովրդական երգեր անուան տակ, արդէն մեծ չափով Կոմիտասեան հանճարի պտուղներն են:

Անաղարտ, գիտական երաժշտական-ազգագրութիւն ստեղծելը Կոմիտասի մեծ առաքինութեան կողմերից մէկն էր միայն: Իսկանն էր ազգագրութիւնը դարձնել այն հիմքը, որի վրայ պիտի բարձրանար ազգային երաժշտական-ստեղծագործական նոր դպրոցը: Այդ դպրոցի հիմնադիր մեծատաղանդ ստեղծագործողը թերեւս անցեալ դարի վերջին տարիներին Գերմանիայում իր ուսումնառութեան շրջանում հանդէս եկաւ հայ ժողովրդական երգերի իր մի շարք մշակումներով, որոնց մէջ փայլուն կերպով դրսեւորուած էր հայ երաժշտական արուեստի նոր եւ ուրոյն ստեղծագործական ոճը:

Իր ստեղծագործութեան մէջ Կոմիտասը մեծ չափով հիմնուեց նաեւ հայ հոգեւոր երաժշտութեան վրայ: Նա իր երաժշտութեան կերտման ատաղձն ու հնարանքները դտաւ նաեւ հոգեւոր երաժշտութեան ըսքանչելի թաքստոցներում, որի ուսումնասիրութեանը նոյնպէս նուիրաբերեց իր կեանքը: «Հայ ժողովրդական եւ եկեղե-

© National Library of Armenia

ցական երգերը» նիւթով դասախօսութեան մէջ, որ սղագրուել է ու տպագրուել 1905 թուականին Թիֆլիսի «Մշակ»-ում, Կոմիտասն ընդգծում է հայ հոգեւոր եւ ժողովրդական երաժշտութեան մէջ եղած սերտ կապը: Նա հերքում է հայ երաժշտութեան այդ երկու տարբեր ճիւղերի իբր թէ բոլորովին տարբեր նկարագիր ունենալը, որպիսի եզրակացութիւնը նա համարում է արտաքին, մակերեւութային ուսումնասիրութեան արդիւնք, առանց իմնելու նրանց խորքը, անկարող վերլուծելու նրանց էութիւնն ու կառուցուածքը: Այդ երկու ճիւղերի մէջ երեւութական տարբերութիւնը Կոմիտասն համարում է օտարամուտ երաժշտութեան ազդեցութեան հետեւանքը, որ առանձնապէս մեծ է եղել եկեղեցական երաժշտութեան վրայ, պղտորել է նրանց ոճն ու հարազատութիւնը:

Գիտականօրէն ապացուցելով, որ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութիւնը նոյն հիմքն ունեցող քոյր-եղբայր են, միաժամանակ նա վեր հանեց դարերի ընթացքում եկեղեցական երաժշտութեան մէջ ամբարուած կերպարային ու երաժշտական-արտայայտչական հնարաւորութիւնները:

Եւ մեր ազգային երաժշտութիւնն իր լայն ընդգրկմամբ, իր տարբեր ճիւղերով, հանդիսացաւ Կոմիտասի ստեղծագործութեան ատաղձը:

Կոմիտասեան մեղեդին միաձուլում, ներդաշնակում է երաժշտութեան արտայայտչական միջոցների եւ ամէնից առաջ բազմաձայնութեան ինքնատիպ կոմիտասեան հարուստ ու նրբազոյն դրսեւորումների հետ, ստեղծելով զարմանալի, թարմ, վճիտ, վեհ, լուսաւոր ու խորաթափանց, յստակ ու անպաճոյճ գեղարուեստական կերպարներ: Կոմիտասն իր երկերով ոչ միայն ստեղծում է ինքնատիպ երաժշտական լեզու եւ ոճ, այլեւ ստեղծում ահռելի սեռի բազմազանութիւն: Նրա մեներգներն ու խմբերգները սովորական, թէկուզ եւ շատ բարձր գեղարուեստական արժանիքների, երգեր չեն: Դրանք ամենախտացած, ամենայղկուած, ամենախոր արտայայտչամիջոցներով կերտուած հնչող ճարտարապետական կոթողներ են:

Կոմիտասի երգերով մի ամբողջ ժողովուրդ է խօսում, մի ամբողջ հաւաքական ոգի է բացայայտւում, սեղմուած, բիւրեղացած մէկի չուրթերին, մի երգի շրջանակներում:

Կոմիտասի մօտ չկայ առանձին եղ, գեղջուկ, բնութիւն, հող: Դրանք մանր, նիւթեղէն են: Կոմիտասի մօտ առանձին նիւթեղէն կէտերը ազուցւում են ըստ յատկանիշների եւ ստեղծում երկու մեծ դասակարգերի բարձր հոգեւոր յարաբերակցութիւն՝ հայրենի հողի եւ հայ ժողովրդի:

Գարուն ա, ձիւն ա արել,
Վայ լէ, լէ, լէ, լէ...
Իմ եարն ինձնից ա սառել...

Ո՛րքան նման է այդ սէրն իր ժողովրդի ճակատագրին: Քանի՛ անգամներ նրա կեանքի ճամբին, վառ գարունքներին ձիւն է իջել: Դրա համար էլ երգում ես ողջ էութեամբ, ներքին մի ողբերգական շնչով, բայց ոչ անզօր ու լալահառաչ, որովհետեւ ձիւնի տակ գարուններ կան ծածկուած, ժողովրդի անմահութեան գարունները...

Ձիդ տու, քաշի այ եղը,
արա հո, հո, արա հո.
Լուծդ մաշի այ եղը
արա հո, հո, արա հո...

Ահա ստեղծագործ կեանքի սրբազործութեան վայրը, այստեղ են ծնւում բոլոր բարիքները: Ծանր է ու դառն այդ աշխատանքը գեղջուկի համար. անիրաւ է աշխարհը: Կարող են խլել աշխատաւորից իր դառն քրտինքի պտուղները, բայց խլել նրանից աշխատելու ձիրքը, անկարելի է: Աշխատաւորն է ստեղծարար աշխատանքի արարիչը... Դրա համար էլ այն անսահմանօրէն վեհ է, աներեր, բազմահնչիւն, կարծես բոլորը աշխատաւորների ներսից պոռթկացող:

Հնչում է մի թաւ ձայն եւ կարծես արձագանգի նման կրկնւում է աւելի հեռու, աւելի բարձր, բայց դա մի ձայն ու նրա արձագանգը չէ: Այդ երկու միանման հնչիւնների տարածութեան մէջ ներդրուած է մի ամբողջ ժողովրդի տառապեալ սիրտը... օ՜, այդ սիրտը

... Նման է էն փլած տներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է տներ,
Բուն պիտի դնեն մէջ վայրի հաւքեր...

Ո՛չ, լաց ու ողբ չէ այն, տրտունջ ու մորմոք. այս երգը երկաթագիր մի մատեան է մեծագոյն վշտի, մեր զգացումին յատուկ, զուսպ, վեհացնող, ազնուացնող, գալիքի բարձունքները տանող:

Քելեր, ցոլեր՝ իմ եարը,
Արեւի տակին՝
Քելեր, ցոլեր՝ իմ եարը,
Սարի սովոր,
Մեն մենաւոր
Շէկ տղայ,
Շող արեգակ,
Թող արեգակ,
Եկ, տղայ...

Միայն մի՞ աղջիկ է միթէ իր սիրած տըղային կանչում թախիծով. օ՜, ոչ, Կոմիտասեան մեղեդին այդ աղջկայ չուրթերին մի ամբողջ ժողովրդի բացուած սիրտը լինի կարծես, ու այնպէս դիւթում է, կանչում: Այնքան խորն է ու մեծ այդ սէրը... Նա իր մէջ արեւներ ու աշխարհներ ունի: Դրա համար էլ թէեւ անսահման քնքշութեամբ ու ամօթխածութեամբ, բայց մեծ սիրտ հաւատով աղջիկը կարող է ասել.

Թող արեգակ,
Եկ, տղայ...

Այսպէս հաղորդում են միմեանց նրա բոլոր-բոլոր երգերը, նրա քնքշութեամբ, մտածուած ու երկիւղածութեամբ շարժած գրչի տակից դուրս եկած բոլոր երգերը:

Կոմիտասեան սաներից, սաներ, որոնց երաժշտութեան ուսուցիչը եղաւ Կոմիտասը, եւ որոնք աշխարհի չորս ծագերը տարան մեծ ուսուցչի աւանդները, Վարդան Սարգսեանը երկիւղածութեամբ ու պաշտամունքով գրում է հետեւեալ տողերը.

«... Ու մեր երգերը, որոնց մէջ հինաւուրց ժողովրդի մը ամբողջ հոգին կար բիւրեղացած, կարծես սպասած էին իրեն, սպասած էին անոր, որ պիտի յանդգնէր սուզուիլ այդ հոգիին խորը, թափանցել անոր խորհուրդին եւ կորզել անոր գաղտնիքը, իր փնտռած գաղտնիքը ... դարերու անհունութենէն ցեղին հոգին է, որ կը խլրտի, կ'արթննայ իր մէջ: Եւ իրրեւ նոր օրերու Մեսրոպ Մաշտոց մը, այնպէս ինչպէս անոր երկունքը եղաւ հայ գրերուն հրաշափառ գիւտին առթիւ, նոյնպէս Կոմիտաս, հայ ձայներու դաշնակութեանց բանալին գտնելու իր տապնապներուն մէջ կ'ապրի իր բուն երկունքը, բեղուն տանջալից ու անքուն գիշերներու անդոհանքներով, վերասլաց տեսիլքներու եւ յափշտակութիւններու ալեկոծութիւններով, ինքնամոռաց կենտրոնացումի մը մէջ խորասոյզ, դիմագրաւելով հոգեկան ահաւոր փոթորիկ մը, որմէ դուրս կու գայ վերջապէս խաղաղած, հանդարտած եւ կարծես սրբացած: Լուսաւոր պսակ մը կայ իր գլխին շուրջը, եւ դէմքը կը ճառագայթէ յաղթանակի անճառելի բերկրութիւնով մը»:

Կոմիտասը խոշորագոյն ստեղծագործող է, որի ողջ բազմազան ու բազմաբովանդակ գործունէութեան մէջ առկայծում է նրա մեծագոյն հայրենասիրութիւնն ու համեստութիւնը: Հայրենասիրութիւնն է, որ նրան անվերջ դրդում է իր ողջ գիտական-ստեղծագործական ջանքը ու նրա արդիւնքները նուիրաբերել, վերադրել իր ժողովրդին:

Զարմանալի խոր ու լայն է երաժշտութեան՝ որպէս արուեստի՝ Կոմիտասեան ըմբռնումը: Նա երաժշտութեան մէջ տեսնում էր ոչ միայն իր ժողովրդի կեանքի ու ներքնաշխարհի արտացոլումը, այլեւ միաժամանակ այն հզօր զէնքի առկայութիւնը, որով կարելի է դաստիարակել

© National Library of Armenia

ժողովրդի ներքնաշխարհը, այդ ճանապարհով փոխել եւ նրա կեանքը:

Ահա այստեղ ասպարէզ է իջնում եւ Կոմիտաս գեղագէտն ու մանկավարժը: Կոմիտասը բռնկուած էր դպրոցներում հոգեւոր երգեր ուսուցանող տիրացուներին երաժշտութեան լիարժէք ուսուցիչներով փոխարինելու տենչով: Նրա այդ կրակոտ տենչը բոլորովին էլ ինքնանպատակ չէր, պայմանաւորուած չէր միայն երաժշտական կրթութիւնը պատանիների մէջ սերմանելու ցանկութեամբ: Կոմիտասը փայփայում էր այն միտքը, որ ուսուցիչները ժողովրդի մէջ կը տարածեն իսկական ազգային երաժշտութիւնը, այն երաժշտութիւնը, որն իր մէջ տանում է հայրենասիրութեան շունչը եւ որն էլ ժողովրդի մէջ կ'ամրացնի ազգային ոգին, եւ նրա ազդեցութեան տակ կը թօթափի իրեն ճնշող, շահագործ տիրապետութեան լուծը եւ կը մտնի իր վերակենդանացման շաւղի մէջ:

Նրա այդպիսի համոզմունքի արտայայտութիւնն է այն փոքրիկ թերթիկը, որ ձեռագիր վիճակում հանդիպում է նրա դիւանի շատ թանկագին թերթերի մէջ· «Ամբողջ մտատանջութիւնս է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մէջ տեղ դրաւեն, նուիրուին ազգային երաժշտութեան ուսումնասիրութեան, տարածեն ժողովրդին մէջ հայ երաժշտութեան ոգին, որպէսզի ժողովրդին մէջ ազգային երաժշտութեան խօսքը մարմնանայ եւ անոր ազդեցութեան տակ ժողովուրդը թօթափելով իր թոյլ պատեանը՝ մտնէ վերակենդանացման շաւիղին մէջ··· Մեր մէջ երաժշտութեան վրայ կը նային իբրեւ հաճոյքի եւ ժամանցի միջոցի մը վրայ··· մինչդեռ ազգային երաժշտութիւնը կը տարածէ հայրենի շունչ եւ միամիտ ու պարզուկ զգացումներ՝ դաստիարակուող սերունդին մէջ: Մէկ հասկցուած անկեղծ ձայն հազար ճառ կ'արժէ, որովհետեւ ճառը պէտք է մարսէ հասարակութիւնը, որ կարենայ անկէ սնունդ առնել, ինչ որ ժամանակներու գործ է· իսկ ձայնը վայրկեանին մէջ կը թափանցէ մարդուն կուրծքէն ներս եւ այնտեղ կը հիմնէ զգացման ու մտքի վառարան»:

Ահա այսպիսի աշխարհայեացքն է որոշում Կոմիտասի ողջ գիրքաւորումն ու մօտեցումը արուեստի, մասնաւորապէս երաժշտութեան հարցերում:

Այս ամէնը ցոյց են տալիս, թէ որքան չարաչար սխալուած են եղել շատերը Կոմիտասի փայլուն միտքն ու ստեղծագործ մեծ սիրտը նրա վառ հայրենասիրութեամբ բռնկուած վեհ ոգին, նրա աշխարհայեցողութիւնը, ջանալ պարփակել էջմիածնի վանական պարիսպներով կամ բուն ժողովրդականի մակարդակից վեր չխոյացող կարողութիւնների ու գործունէութեան մէջ:

«Երբ ժողովրդի կեանքը ազատ ու խաղաղ է – գրում է նա – ստեղծագործութեան տեսակներն ու ծաւալը ճոխանում են, իսկ ստրկութեան ճնշման ատամանին նայելով էլ տկարանում, ընկճւում եւ մի շատ սեղմ բան է դառնում»:

Իր ողջ էութեամբ ու գործունէութեամբ հարազատ ժողովրդին նուիրուած Կոմիտասը համաշխարհային ճանաչում էր բերում իր ժողովրդին, եւրոպական խոշոր երաժշտական կենտրոններում ներկայացնելով հայ երաժշտութիւնը, իւր ստեղծագործական հանճարով սրբագործուած հայ երաժշտութիւնը:

1914 թուականի ամրանը, վերադառնալով Փարիզում կայացած միջազգային երաժշտական համաժողովից, ուր նա փայլուն յաջողութիւն էր ունեցել իր կարդացած դասախօսութիւններով եւ երգչական խմբավարական արուեստով, Պոլսի «Ազատամարտ» թերթի թղթակիցի հարցումներին պատասխանում է·

«··· Իմ յայտնած տեսութիւններս հայ հոգեւոր եւ գեղջուկ երաժշտութեան մասին նորութիւն էին մանաւանդ անոնց համար, որոնք տարի մը առաջ կ'անդիտանային կամ կը մերժէին հայ ինքնուրոյն երաժշտութեան մը գոյութիւնը: Յետոյ շատերը, որ հայ երաժշտութեան մասին հարեւանցի գաղափար մը ունէին, դասախօսութիւններէ ետք՝ առաջինը եղան խոստովանող, որ հայ երաժշտութիւնը գեղարուեստական բարձր արժէք մը կը ներկայացնէ, աւելի հարազատ, քան ուրիշ շատ մը ժողովուրդներու մէջ, աւելի վսեմ քան արեւելեան ուրիշ ազգերու մօտ»: Այնուհետեւ Կոմիտասը շարունակում է՝ «Ուրախ եմ որ բոլոր այդ յայտնի վարպետները կրցան թափանցել, որքան հնար է, հայ երաժշտութեան խորութեանց եւ բարձրաձայն յայտարարեցին անոր ոյժն ու քնքշութիւնը, չվարանելով նոյնիսկ, աստուածային կոչել զայն: Հետաքրքրական էր նաեւ տեսնել, երբ միջազգային վարպետներ համաժողովն աւարտելէն ետք, աղբիւրները կը փնտռէին հայ երաժշտութեան աւելի եւս ծանօթանալու համար եւ անոնցմէ շատերը սկսան կիրակի օրերը Հայոց եկեղեցին յաճախել նաեւ եկեղեցական երաժշտութիւնը վայելելու համար»:

Թղթակցի հետ ունեցած իր զրոյցը Կոմիտասը եզրափակում է հետեւեալ խօսքերով· «Ես տարիներու աշխատանքով քերով· «Ես տարիներու աշխատանքով չիներ եմ իմ ուղեղիծը ուրկէ ընթացեր եմ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ ետքն ալ, որքան ատեն որ ոյժ զգամ երակներուս մէջ, ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս մէջ, որի նուիրականութեանը համոզուած եմ բոլոր սրտով»:

Եւ իր առաքելական ուղով անխոտոր ընթացող Կոմիտասը եղաւ նաեւ ուսուցիչ այս բառի բացառիկ տարողութեամբ:

Կոմիտասն իր գործի, երաժշտութեան մէջ ներդրած անհուն նուիրումով կարողանում էր հոգիներ յեղաշրջել, նոր աշխարհաճանաչում ու նոր աշխարհընկալում ծնել մարդու մէջ եւ դրանով բոլորին դարձնել իր գործի ու ձիրքի ջերմեռանդ խնկարկուն:

Շահան Պերպերեանը դրանցից մէկն է: «Այս մարդը – գրում է Պերպերեանը – Սոկրատին պէս աստուածային ոգիին իջեւան մըն է իր այդ կերպարանքին տեսեւ ··· ու պատահեցաւ իմ մէջս այն գիշեր, մին հոգիի կեանքին էն տարօրինակ երեւոյթներէն, որ յայտնատեսութեան մը լոյսին տակ կատարուած դարձը կը կոչուի: Հայ երաժշտութիւն մը, երաժշտութեան ամենաբարձր տեսակէն, կը յայտնուէր մէկէն ինծի, հեռաւոր ցեղային ալքերուս մէջ արձագանգներ արթնցնելով: Նոր ու այնքան հին–իսկութիւն մը՝ որ կը փոխէր երաժշտական էութիւնս, զայն կը շրջէր կարծես: Վարդապետին արուեստագիտական անձին մէջէն, մէկէն, դէմ–յանդիման կը գտնէի ինքզինքս ամբողջ երաժշտական հայրենի աշխարհի մը, որուն հպարտ էի ես ալ հեռաւոր կերպով զաւակը եղած ըլլալուս»:

Այո՛, Կոմիտասն իր սրբազան առաքելութեամբ ոչ միայն եղաւ հայ երաժշտութեան Մաշտոցը, եւ հայ հոգու Նարեկացին, այլեւ մեծ ոգեկոչողը իր գործի շարունակողների:

Եւ այդ շարունակութիւնը շատ է լայն ու ընդարձակ, ինչպէս նաեւ խոր ու բարձրը, որովհետեւ Կոմիտասն իր երաժշտական յայտնութիւններով եւ ըստեղծագործական սկզբունքներով նոր եւ ուրոյն ներդրում է համամարդկային երաժշտական մշակոյթի մէջ: Որովհետեւ այն ազգային երաժշտական արուեստի զարգացման ուղին է, որովհետեւ նա ունեցաւ նաեւ իր անմիջական սաներն ու աշակերտները, որոնցից իւրաքանչիւրն իր կարողութիւնների չափով վերցրեց մեծ ուսուցչի աւանդներից այն ինչ կարողացաւ:

Մանկավարժ–հոգեբան Կոմիտասը ըզդուշացնում է ուսուցիչներին այնպիսի երգերով զբաղեցնել երեխաներին, որոնցից իր մատաղ հոգին իրական սնունդ կարողանայ ամրարել: Երգը զուարճալիք ու ժամանց չէ, երգն զգացում է, ուրեմն եւ «դատարկ հնչումէն դատարկ զգացում կ'առաջանայ միայն»: Երգը ոգի է· ուրեմն «տխուր երգ չտալ երբեք, այլ ամէն ինչ աշխոյժ, եռանդ պիտի ներմուծէ անոնց հոգիներէն ներս»:

Ուրեմն· «··· Զգուշութեամբ եւ երկիւղածութեամբ մօտեցէք դաստիարակութեան գործին, խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը: Դաստիարակել կոչուած էք

© National Library of Armenia

սերունդ մը, որը ապագայ ազգն է, սը-
խալ ուղղութեամբ՝ ազգ մը կը խորտակէք
վերջը···»:

Գիտնական գեղագէտը, ստեղծագոր-
ծողն ու ազգագրագէտը, մանկավարժն ու
հասարակական գործիչն իր բոլոր հան-
ճարեղ դրոյթները ամրակնդում ու առա-
ւել համոզիչ էր դարձնում եւ իր կատա-
րողական բարձր արուեստով:

Նա հիանալի երգիչ էր, որ միաւորում
էր իր կատարման մէջ երգչական բարձր
վարպետութիւնը երգերի մէջ ներդբ-
ուած ազգային ոգու, իր ժողովրդի սըբ-
տի թրթիռները նրբագեղութեամբ ար-
տաբերելու կարողութեան հետ: Նա իր
երգով հիացում էր առաջացնում ամէն-
ուրեք եւրոպական երաժշտութեան բար-
ձրը շրջաններում:

Կոմիտաս–երգիչը մեծ է մանաւանդ
նրանով, որ նա իր երգեցողութեամբ նա-
եւ հիմք դրեց մի ամբողջ դպրոցի – հայ
ազգային երգարուեստի դպրոցին: Այդ
դպրոցի երգելակերպը իրաւամբ կարելի
է համարել Մեսրոպեան, բաղդատել մեր
վսեմ ճարտարապետութեան հետ: Որով-
հետեւ Կոմիտասեան երգարուեստի յատ-
կանիշներն արտայայտւում են՝ անսեթե-
ւեթ, կորովի, պարզօրէն շնորհալի, սըբ-
տագին, քնքուշ, խաղաղ, ազգու բառերի
խոր իմաստով, մի բան, որ այնքան ընդ-
հանուր է հայ արուեստի համար: Իրա-
ւամբ է ասուած, թէ «Կոմիտասի ձայնով
ամբողջ ժողովուրդ մըն է, որ կ'արտա-
յայտուի»: Կոմիտասի կատարողական
արուեստն ու դպրոցը կ'ամբողջանայ մի-
այն իր խմբավարական գործունէութեան
հետ միաւորելով:

Երգարուեստի բացառիկ գիտակցու-
թիւն, ինքնուրոյն, ինքնայատուկ մեթո-
տով հնչիւնների բարդ հիւսուածքի մէջ
իւրաքանչիւր հնչիւն անվրէպ լսելու ու
որսալու մեծ ձիրք, ուսուցուող երգը իր
բովանդակութեամբ կերպարանօրէն բա-
ցատրելու կարողութիւն, բազում հա-
դագներից իր ցանկացածը դուրս կորզե-
լու մոգական ոյժ, ընդհանուր համահընչ-
ունութիւն ստեղծելու գերազոյն ճաշակ
– սրանք են Կոմիտասի խմբավարական
արուեստի առանձնայատկութիւնները:
Դրանով էլ Կոմիտասը դարձրեց հսկայա-
կան մի զանգուած, ոգիների հսկայական
մի բազմութիւն, որն իր մէջ կրեց մեծ
ուսուցչի անմար աւանդները:

Որքան դժուար էր այդ, բայց Կոմի-
տասն արաւ այն անհուն նուիրումով, ա-
ռանց ընկրկելու:

Որքան սաղական կը լինէր Կոմիտասին
իր առաքելական աշխատանքի մէջ այն
գնահատականը, որ ինքը տուել է դերա-
սանուհի Սիրանոյշին իր 35ամեայ յոբե-
լեանի առթիւ. «Ի՞նչ աւելի դժուար բան
կայ, քան սրտեր ու հոգիներ տաշելը եւ
այն էլ այնպիսի միջավայրում, ուր գեղ-
արուեստը հաւասար է ժամանցի: Բայց
դուք ժրաջան մեղուի պէս 35 տարի շա-
րունակ թռաք մէկ բեմից միւսը եւ գեղ-
արուեստի մարգերից բազմապիսի ծա-
ղիկներից հաւաքեցիք առատ հիւթ, որ-
պէսզի հայ բեմի փեթակը լցնելու օժան-
դակէք»:

Իսկ ինքը Կոմիտասը՝ ի՞նչպէս կարո-
ղացաւ հայ երաժշտութեան անդաստա-
նից այնքան նեկտար ամբարել, ազգային
բարձր երաժշտութեան կենսահիւթը շա-
գաթելու համար:

Կոմիտասն ապշեցնում էր իր գործու-
նէութեան անդաստանի ահռելի ընդգբ-
կումով: Ազգային երաժշտութեան ոչ մի
ընդաւառ դուրս չի մնացել իր տեսա-
դաշտից, ամէն մի մանրուք իսկ իր մտա-
հոգութեան առարկան է դարձել, եւ որ
առաւել կարեւորն է, ամէն ինչին նա ան-
դրադարձել է բացառիկ լրջութեամբ,
քննել այն գիտականի բարեխղճու-
թեամբ, մեծ հայրենասէրի ջերմ սրտով:

Այսպիսի աշխարհահայեացքն ու աշ-
խարհընկալումն է, որ Կոմիտասին մը-
խարհընկալումն է, որ Կոմիտասին մը-
զում է իր ազգային երաժշտական մշա-
կոյթի ինքնութիւնն ու արժանիքները
հիմնովին վերհանելուց յետոյ, այն ճա-
նաչելի դարձնել ինչպէս հայ ժողովրդին,
այնպէս էլ օտարազգիներին: Այս է պատ-
ճառը, որ նա իր անասելիօրէն սուղ ու
յաղեցած ժամանակից պատառիկներ

տրամադրեց շրջելու Եւրոպայի չատ քա-
ղաքներ, մասնակիցը լինելու երաժշտա-
կան համաժողովների ու փառատօների,
դասախօսութիւններ կարդալ, յօդուած-
ներ հրապարակել տարբեր լեզուներով,
երգել, խմբեր ղեկավարել:

Կոմիտասը իր երաժշտական–ստեղծա-
գործական գործունէութեամբ ո՛չ միայն
ստեղծեց ազգային երաժշտական դպրոցը՝
դայն բերելով համամարդկային ասպարէզ,
այլեւ իր նոր դպրոցով հսկայական հե-
տաքրքրութիւն առաջացրեց եւրոպական
երաժշտութեան նոր ուղղութիւնների,
նրանց մեծագոյն ներկայացուցիչների
մէջ, ինչ որ չափով իր ներգործութիւնն
ունեցաւ նրանց վրայ:

Այո՛, այդ զարմանալի չէ, այդ այդ-
պէս է, որովհետեւ Կոմիտասն ասպարէզ
իջաւ այն ժամանակ, երբ եւրոպական
արուեստն իր անկման շրջանն էր ա-
պրում, երբ այդ արուեստը կորուել էր
իր ամրակուռ հոգից՝ կեանքից, ժողո-
վրդեան զգացողութիւնից, ժողովրդա-
կան ստեղծագործութեան գանձարանից,
երբ բովանդակութիւնը մղւում էր եաին
շարքը, յանուն արտայայտչական միջոց-
ների «նորարարութեան» ու «ինքնատը-
պութեան»:

Եւ ահա, այս մթնոլորտում ասպարէզ
է իջնում Կոմիտասը: Նրա հետ յայտնը-
ւում է մի ամբողջ ժողովուրդ իր բովան-
դակ կեանքով, ժողովուրդ՝ երաժշտա-
ցած, Կոմիտասեան արուեստով վերբ-
տեղծուած, պայծառացած, հզօր ձայն
ձեռք բերած:

Կոմիտասը կեանք էր բերում, բերում
էր ժողովրդական ընկալում, ժողովրդա-
կան մտածողութիւն, բերում էր ար-
ուեստ, որը եւ մեծ բովանդակութիւն ու-
նէր, եւ զգացում, եւ արտայայտչական
մեծ ու խորունկ բազմազանութիւն, եւ
նկարագրական ոյժ:

Կոմիտասեան արուեստն իր ժողովբ-
դային հիմքերով եւ սկզբունքներով այն-
քան ոգեշնչեց Ռոլանին, որ նա նրա մէջ
տեսաւ եւրոպական «հիւանդ արուեստի»
բուժիչ, նորոգող հնարաւորութիւններ:

Այդ այնպիսի խոր համոզում էր Ռոլանի
համար, որ նա այդ մասին գրել է ոչ մի-
այն իր տեսական աշխատութիւններում,
այլեւ այդ միտքը թափանցել է նրա գեղ-
արուեստական գործերի մէջ: Ճիշտ է,
Ռոլանը այդ նորոգիչ ոյժը տեսնում էր
ընդհանրապէս արեւելեան երաժշտու-
թեան մէջ, բայց ուսումնասիրութիւնը
ցոյց է տալիս, որ ընդհանուր արեւելեա-
նի մէջ, նա առանձնակի տեղ է տուել
հայկական, եւ յատկապէս, Կոմիտասեան
երաժշտութեանը:

Եւ ահա իր «Ժան Քրիստոֆի» հերոս-
ներից Օլիվերի բերանով Ռոլանն ասում
է· «Արեւմուտքն այրում է ինքն իրեն···
Շուտով, շուտով կը սպառուի···»: Ապա
նա շարունակում է· «··· ես արդէն տես-
նում եմ այլ լոյսեր, նրանք բարձրանում
են արեւելքի բարքերից···»:

Կոմիտասի ստեղծագործողի ահռելի
արժանիքներն ու նշանակութիւնը խորա-
պէս գնահատել է Դեբիւսին: Հանրայայտ
դարձած այն գնահատականը, թէ «եթէ
Կոմիտասը գրէր միայն «Անտունին», այդ
էլ բաւական կը լինէր նրան խոշոր ար-
ուեստագէտ համարելու» ոչ պատահա-
կան է, ոչ միակը: Նա գործնականօրէն
շատ բան է արել հանրաճանաչ դարձնելու
համար Կոմիտասի ստեղծագործութիւնը:
Նա Կոմիտասի երկերը համարել է «Հայ
վարպետի կողմից կատարուած երաժշ-
տական խոշոր յայտնագործութիւն»,
«այդ օրերի երաժշտական աշխարհի ա-
մենաուշագրաւ երեւոյթը»:

Լուի Լալուար 1906 թուականի Դեկ-
տեմբերի 1ին Կոմիտասի Փարիզում տը-
ուած համերգի առթիւ գրեր է, թէ «այդ
համերգը մի յեղաշրջում էր եւ իր յատ-
նութեամբ զարմացրեց մեզ···»:

Նոյն 1906 թուականին Բրիւսելի «Guide
musical» թերթը գրել է, թէ «Խիստ ազ-
դեցիկ է գեղեցկութիւնն այդ մեղեդինե-
րի, որոնք նրա (Կոմիտասի) չնորհիւ
մտնում են արուեստագէտների երկա-
ցանկի մէջ»:

Մաքս Զայֆերդն ու Օսկար Ֆլայշերը
Կոմիտասի հայ երաժշտութեան ասպարէ-

© National Library of Armenia

զում կատարած ուսումնասիրութիւնները, որոնք թափանցել են նրա ստեղծագործութեան մէջ, համարում են յայտնութիւններ, որոնք արեւմտաեւրոպական երաժշտութեան աշխարհահռչակ ներկայացուցիչներին իսկ «շատ բան ուսուցանել կարող են», «արդի գիտութեանը անգին ծառայութիւններ կարող են մատուցել»:

Կոմիտասի ստեղծագործութիւնն ու գիտական գործունէութիւնը համանման դըՆահատականի է արժանացել նաեւ Սէն-Սանսի, Օպրիի, Ռավելի, Զերեպնիի, Գնեսինի, Հարտմանի եւ շատ այլ նշանաւոր երաժիշտների կողմից:

Կոմիտասեան վսեմ արուեստի բարերար ներգործութիւնը սկսւում է դաղափարների, երաժշտագիտական մտքի վրայ ունեցած իր ներգործութիւնից, որ այնուհետեւ պիտի տարածուէր նաեւ բուն ըստեղծագործութեան մէջ, անշուշտ իբրեւ սկզբունք, եւ ոչ իբրեւ ընդօրինակութիւն:

Շարժել միտքը, սնունդ տալ նոր դաղափարների մեծագոյն արժանիք է, մի բան, որ կապւում է Կոմիտասի անուան, նրա ստեղծագործական գործունէութեան հետ:

Այսպէս, Կոմիտասն իր մեծ ու խոր երաժշտական գործունէութեամբ ոչ միայն հանդիսացաւ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրն ու մեծագոյն ներկայացուցիչը, այլեւ դրանով դարձաւ համամարդկային երաժշտական մշակոյթի խոշոր դէմքերից մէկը, որն առաւել ամբողջընդուած կը լինէր, եթէ այնքան անողոք ու անժամանակ չհասնէր եղեռնական վախճանը...

Ահա թէ ո՛րն է Կոմիտասի մեծութիւնը, Կոմիտասի, որ եկաւ հայ ժողովրդի կեանքի ու հոգեւոր մշակոյթի բազմադարեան պատմութեան խորքերից ու վեր խոյացաւ երեսը դարձրած նրա զարգացման նոր ու հեռասլաց ուղիները:

ՑԻՑԻԼԻԱ ԲՐՈՒՏԵԱՆ

Արուեստի վաստակաւոր գործիչ

(Երեւան)

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

1969ին՝ Կոմիտաս Վարդապետի, Յովհաննէս Թումանեանի, Լեւոն Շանթի եւ Երուանդ Օտեանի ծննդեան հարիւրամեակները կատարուեցան:

Կոմիտաս Վարդապետ կը վայելէ բոլոր հայութեան անվերապահ յարգանքը:

Յովհաննէս Թումանեան «Ամենայն Հայոց Բանաստեղծը», Հայաստանի եւ ըստիւռքի մէջ ունի հիացողներու անթիւ բազմութիւն:

Լեւոն Շանթի յոբելեանին հանդէսներն ալ անշուշտ՝ ստեղծեցին ոգեւորութիւն մը իր համակիրներու կողմէն:

Ընդհակառակն, Երուանդ Օտեանի անունին չուրջ կը պակսի կարծիքներու միութիւն: Ոմանք կը կոչեն զինք Հայոց ամէնէն մեծ երգիծաբանը. աւելի շատեր՝ Յ. Պարոնեանի հետ կ'անուանեն Հայոց երկու մեծ երգիծաբանները: Կան, սակայն, ուրիշներ, որոնք իր մէջ աննկարագիր մարդ մը կը տեսնեն եւ կը համարձակին հաւաստել թէ «Պարոնեանի անհամեմատ որակին դէմ՝ Օտեան առաւելապէս բանակ ունի» (ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ, Դար մը գրականութիւն, Գահիրէ, 1955, էջ 526):

Կը համարինք Երուանդ Օտեանի յոբելեանը լաւագոյն կերպով կատարել, եթէ ընձեռենք ընթերցող հասարակութեան՝ մեծ երգիծաբանի բարդ անհատականութիւնը եւ գործը ճանչնալու կարելիութիւնը:

Ցաջորդարար պիտի նկատենք՝

Ա.– Սփիւռքի հայութեան կեցուածքը Երուանդ Օտեանի հանդէպ·

Բ.– Երուանդ Օտեան ուսումնասիրուած Սովետական Հայաստանի մէջ·

Գ.– Կենսագրութիւնը·

Դ.– Մարդը եւ հասարակաց գործիչը·

Ե.– Գլխաւոր գործերը·

Զ.– Գրագէտը·

Է.– Գործերուն ցանկը·

Ի՞ՆՉ Է ՄԵՐ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Զենք յաւակնիր Երուանդ Օտեանի մասին վերջնական ուսումնասիրութիւն մը կատարել: Երբ իր գործերուն ցանկը տանք, պիտի տեսնուի որ արտաքոյ կարգի բեղուն հեղինակի մը դիմաց կը գտնուինք: Ունի բազմաթիւ տասնեակներու հասնող վէպեր, վիպակներ, պատմուածքներ, երգիծական հատորներ, յուշագրութիւններ, ուսումնասիրութիւններ, թատերգութիւններ, որոնց միայն մէկ համեստ մասը լոյս տեսած է առանձին հատորով, ընդհանրապէս անխնամ ու մերթ պակասաւոր տպագրութեամբ:

Եթէ ուզենք Օտեանի իրական դիմագիծը վերակազմել թէ՛ իբր մարդ, թէ՛ իբր գրագէտ, հարկ է 1890էն 1925 տարիներու ընթացքին հրատարակած հազարաւոր քրոնիկներն ու տոմսերն ալ աչքի առջեւ ունենալ:

Ան հրատարակած է նաեւ չուրջ 15 անձնական թերթեր, որոնցմէ ոմանք նոյնպէս սեփական դիմագիծ ունին:

Պէտք չէ մոռնալ նաեւ իր տասնեակ հատորներու հասնող թարգմանութիւնները:

© National Library of Armenia